

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵԼՔՈՆՅԱՆ ՄԱՐԻԱՄ ՀՈՎԻԿԻ

**ՕՍՄԱՆՅԱՆ ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ՍՏԵՂՇԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ԺԱՆՐԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(XV- XVI ԴԴ.)**

Ժ.01.07.«Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2024

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝

**պ.գ.դ., պրոֆեսոր
Մելքոնյան Ռուբեն Հովհաննեսի**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

**բ.գ.դ., պրոֆեսոր
Կոզմոյան Արմանուշ Կոզմոյի**

**բ.գ.թ., դոցենտ
Պողոսյան Նաիրա Հակոբի**

Առաջատար կազմակերպություն՝ **ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ**

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2024 թ. նոյեմբերի 21-ին, ժամը 14.30-ին, ԵՊՀ-ում գործող ԲԿԳԿ-ի Արտասահմանյան գրականության 066 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցե՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 422 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՊՀ-ի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է 2024 թ. հոկտեմբերի 21-ին

Մասնագիտական խորհրդի

գիտական քարտուղար՝



բ.գ.թ., դոցենտ Ա.Վ. Եգանյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

«Կանացի գրականության» դասակարգումն ու ուսումնասիրությունը մշակութաբանության մեջ յուրահատուկ տեղ է զբաղեցնում՝ հաճախ ընդլայնելով վերջինիս սահմանները և հատվելով սոցիոլոգիայի, քաղաքագիտության ու այլ գիտակարգերի հետ: Կանանց գրչության պատմությունն ուսումնասիրության նոր ոլորտ է, քանի որ կանայք իրենց դիրքով, կարգավիճակով, հասարակության մեջ ներգրավվածությամբ ավանդաբար զիջել են տղամարդկանց կամ ավելի քիչ ներկայացվածություն են ունեցել: այս երևույթն էլ ավելի ցայտուն դրսևորվել է պահպանողական, մասնավորապես՝ մուսուլմանական հասարակություններում:

Օսմանյան գրականության մեջ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում կին գրողները: Ըստ տարբեր վկայությունների, օսմանյան գրականության մեջ ստեղծագործած կանանց թիվը հասնում է մինչև հինգ տասնյակի¹, իսկ 15-16-րդ դարերում վկայվում է ընդամենը յոթ կին գրողի մասին:

Միջնադարյան իսլամական պետություններից Օսմանյան կայսրության քաղաքական, սոցիալական և մշակութային պատմության ընդհանուր ուսումնասիրությունը թույլ է տալիս առանձնացնել 15-16-րդ դարերը՝ որպես կայսրության զարգացման առանձին շրջափուլ: Այս ժամանակաշրջանում կայսրության կյանքի տարբեր ոլորտներում, այդ թվում մշակույթի և գրականության մեջ նկատվող որոշակի առաջընթացը նպաստեց, որ ստեղծվի նաև կանանց համար կրթության, գրականությամբ զբաղվելու որոշակի նախապայմաններ:

Թեմայի արդիականությունը. Գրականագիտական տեսանկյունից կանանց կողմից ստեղծված գրականությունը ուսումնասիրման առանձին ճյուղ է², որի շրջանակներում կարևոր է հասկանալ արևելյան իսլամական միջավայրում ստեղծագործած կանանց գրական գործունեությունն ու երկերի առանձնահատկությունները: Դասական արևելագիտության շրջանակներում կանանց կողմից ստեղծված գրականությունն առանձին կարևորություն ունի, քանի որ արևելյան քաղաքակրթական արեալն իր ավանդույթներով և

¹ Bekiroğlu N., Osmanlıda Kadın Şairler, Ocak 2, 2000, <http://www.nazanbekiroglu.com/2000/01/02/osmanlida-kadin-sairler/> (հասանելի է՝ 17.06.2023)

² Smochin O., The Feminine Tradition in English Fiction, Journal of Vasył Stefanyk Precarpathian National University, Vol. 2, No. 2-3, Ivano-Frankivsk, 2015, p. 94, https://www.researchgate.net/publication/283241015_The_Feminine_Tradition_in_English_Fiction (հասանելի է՝ 10.05.2024)

կառուցվածքով էականորեն տարբերվում է արևմտյանից: Այս համատեքստում թուրքական ֆեմինիզմի նախապատմության և գրականության մեջ կանանց դերը սահմանելու տեսանկյունից կարևոր է ուսումնասիրել օսմանյան առաջին կին գրողներին, որն էլ ընտրել ենք որպես մեր ատենախոսության հետազոտական նյութ:

Սույն թեմատ կարևոր է ոչ միայն գրականագիտության, այլև ընդհանուր օսմանագիտության և թուրքագիտության տեսանկյունից, քանի որ օսմանյան գրականության մեջ առաջին կին գրողների ստեղագործությունների քննությունը թույլ է տալիս ներկայացնել ոչ միայն գրական գործընթացներն ու դրանց առանձնահատկությունները, այլև կոնկրետ պատմաքաղաքական իրողությունները, այդ պայմաններում ֆեմինիզմի ծագման և կանանց սոցիալիզացիայի դրսևորումների հիմքերը:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Սույն ատենախոսության **նպատակն** է հետազոտել և ներկայացնել օսմանյան գրականության զարգացման «ոսկեդար» համարվող 15-16-րդ դարերում պալատական գրականության զարգացման առանձնահատկությունները, քննել իսլամական հասարակությունում կանանց կարգավիճակից բխող պայմաններում վերջիններիս գրական գործունեության հնարավորությունները, վերհանել տվյալ ժամանակահատվածում ստեղծագործած կին գրողների երկերի թեմատիկ և գաղափարական հիմնական ուղղությունները:

Ատենախոսության նպատակները կյանքի կոչելու համար առանձնացրել ենք հետևյալ **խնդիրները**.

1. Ուսումնասիրել օսմանյան պալատական գրականության ձևավորման նախադրյալներն ու զարգացման առանձնահատկությունները 15-16-րդ դարերում:
2. Քննության ենթարկել օսմանյան պոեզիայի հիմնական ժանրերը, գաղափարական ու թեմատիկ առանձնահատկությունները:
3. Ներկայացնել իսլամական հասարակության մաս կազմող օսմանյան իրականության մեջ կանանց սոցիալական կարգավիճակն ու դրա հետ կապված առանցքային ընկալումները:
4. Ներկայացնելով 15-16-րդ դարերի օսմանյան կին գրողների կյանքի ու գրական գործունեության ընդհանուր բնութագիրը՝ քննել Օսմանյան կայսրությունում կանանց ստեղծագործելու միջավայրն ու հնարավորությունները:

5. Առանձին քննության առնել Միհրի Հաթունի ստեղծագործությունների թեմատիկ, ժանրային առանձնահատկությունները՝ որպես ուսումնասիրվող շրջանի կին գրողներից միակը, որի ստեղծագործությունների ամբողջական ժառանգությունը՝ Դիվանը պահպանվել և հասել է մեր օրեր:

6. Միհրի Հաթունի և մյուս կին գրողների ստեղծագործությունների քննությամբ ներկայացնել իսլամական հասարակությունում և միջավայրում գենդերային խտրականությանն առնչվող խնդիրները:

Արենախոսության ժամանակագրական շրջանակները:

Մեր ատենախոսության համար որպես ժամանակագրական սկիզբ ենք ընտրել պատմական շրջադարձային կետերից մեկը՝ օսմանցիների կողմից Կոստանդնուպոլսի գրավումը, որից հետո օսմանյան մշակույթի և մասնավորապես՝ գրականության զարգացումն ընթացավ արևելաիսլամական և արևմտաքրիստոնեական փիլիսոփայական և մշակութային արժեքների յուրացման, դրանց միախառնման փորձի տրամաբանությամբ: Ատենախոսության հստակ ժամանակագրական սահմանները 15-16-րդ դարերն են, քանի որ այս շրջանը համարվում է օսմանյան պալատական գրականության զարգացման «ուսկեդար»: Դրանից զատ՝ պայմանավորված գրական գործընթացների տարաբնույթ և երբեմն հակասական ընթացքով՝ այս ժամանակահատվածը բավականին բազմաշերտ և խրթին է: Օսմանյան գրականության փուլերի պարբերականացման առումով 15-16-րդ դարերն առանձնացվում են որպես զարգացման առանձին շրջան, որը կարևորվում է նաև օսմանյան պալատական պոեզիայում առաջին կին գրողների գրական գործունեությամբ:

Աշխարանքի մեթոդաբանական հիմքը.

ատենախոսության համար կիրառել ենք համեմատական, վերլուծական, համադրական, կենսագրական, գեղագիտական, ձեռագրագիտական և տեքստաբանական մեթոդները: Աշխատանքում համադրվել և համեմատական վերլուծության են ենթարկվել տարբեր գրականագետների կողմից խնդրո առարկային վերաբերող թեզերն ու տեսակետները, դրանց նմանություններն ու տարբերությունները: Ուսումնասիրվող շրջանի օսմանյան տարբեր գրողների, մասնավորապես՝ բանաստեղծուհիների կենսագրությունների, ստեղծագործությունների ձեռագիր և տպագիր տեքստերի գեղագիտական վերլուծության, համադրման և համեմատության օգնությամբ վերհանվել են տվյալ գեղարվեստական գործերի

Ժանրային և թեմատիկ առանձնահատկությունները, փիլիսոփայական-գաղափարական առանցքները՝ ժամանակի իրողությունների համապատկերում:

Ատենախոսության գիտական նորույթն ու կիրառական նշանակությունը:

Օսմանյան առաջին կին գրողներին, մասնավորապես՝ Ջեյնեփ և Միհրի Հաթուններին նվիրված մի շարք ուսումնասիրություններ կան, որոնք արվել են ինչպես թուրք, այնպես էլ ռուսաստանյան և արևմտյան գրականագետների կողմից: Սակայն սույն ատենախոսությունն առանձնանում է մի շարք հիմնահարցերի, ինչպիսիք են՝ բանաստեղծուհիների կողմից բարձրաձայնվող սոցիալական, սիրային, գեղերային անհավասարության խնդիրների համակողմանի լուսաբանմամբ: Հարկ ենք համարում նշել, որ հայկական օսմանագիտության շրջանակներում սույն ատենախոսությունը 15-16-րդ դարերի օսմանյան կին գրողների ստեղծագործությունների մանրակրկիտ քննությանը նվիրված առաջին փորձն է: Կիրառական նշանակության առումով՝ աշխատանքը կարող է օգտակար լինել ԲՈՒՀ-երում միջնադարյան օսմանյան գրականության, մշակույթի դասավանդման շրջանակներում, ինչպես նաև ընդհանրապես Օսմանյան կայսրության հասարակական-քաղաքական իրողությունների հետազա ուսումնասիրություններին:

Ուսումնասիրության փորձաքննությունը: Ատենախոսությունը քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի թյուրքագիտության ամբիոնը, իսկ դրա հիմնադրույթներն արտացոլված են հեղինակի՝ գիտական պարբերականներում հրապարակած տասնմեկ հոդվածներում: Ատենախոսությունում ընդգրկված տարբեր խնդիրներ ներկայացվել են նաև հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև դասախոսությունների և աշխատաժողովների շրջանակներում:

Հետազոտության աղբյուրագիտական հիմքը և հիմնահարցի ուսումնասիրվածության աստիճանը: Մեր ատենախոսության համար աղբյուրագիտական հենք են ծառայել Միհրի Հաթունի՝ Ստամբուլում գտնվող Սուրբ Սոֆիայի գրադարանում պահվող Դիվանի՝ ստեղծագործությունների ժողովածուի, № 3974 ձեռագիրը³, ինչպես նաև օսմանյան պատմագիրների օսմաներեն հուշագրություններ-մատյանները⁴: Ատենախոսության

³ Dîvân-ı Mîhrî Duhter-i Mevlânâ Belâyî, Süleymaniye Kütüphanesi Ayasofya Bölümü, No: 3974, 77 yk .

⁴ **Âşık Çelebi**, Meşâirü’ş-Şuarâ or Tezkere of Âşık Çelebi, yay. **Meredith-Owens G.**, London, Luzac, 1971, 597 p., Beyânî Tezkiresi (Tezkiretü’ş-ş u’arâ), hazırlayan: **Sungurhan A.**, Ankara, 2017, 242 s., **Es-Seyyid Pîr Mehmed bin Çelebi**, Meşâ’irü’ş-su’arâ, hazırlayan: **Kılıç F.**, Ankara, 2018, 706 s., Evliyâ Çelebi Seyahatnâmesi, c. 1, hazırlayan: **Gökay O.**, İstanbul, 1996, 500 s., **Kınalızâde Hasan Çelebi**, Tezkiretü’ş Şu’arâ, hazırlayan: **Sungurhan A.**, Ankara,

շրջանակներում օգտվել ենք հայերեն, օսմաներեն, թուրքերեն, ադրբեջաներեն, անգլերեն, ռուսերեն, ֆրանսերեն պատմագիտական և գրականագիտական աշխատություններից, գիտական հոդվածներից, տպագիր և էլեկտրոնային մամուլում, սոցիալական ցանցերում տեղ գտած առանձին հրապարակումներից:

Ատենախոսության ժամանակագրական սահմանները հստակեցնելու և օսմանյան պալատական գրականության զարգացման պատմական նախադրյալները ներկայացնելու համար օգտվել ենք հայ պատմաբան-արևելագետներ Վ. Բայրուրյանի⁵ և Յու. Պետրոսյանի⁶, թուրք պատմաբաններ Ա. Շերեֆի⁷, Ա. Ջևադի⁸, Մ. Ուզունչարշըրլի⁹, Հ. Ինալըքի¹⁰, արևմտյան պատմաբաններ Ս. Ռանսիմանի¹¹, Ս. Շոուի¹², Բ. Իմբերի¹³, Ս. Լեյն-Փուլի¹⁴, Ռ. Վորրինգերի¹⁵ աշխատություններից: Օսմանյան պալատական միջավայրում գրականության զարգացման պատմությունը լավագույնս արտացոլված է հայ պատմաբան Ա. Նավարյանի¹⁶, թուրք պատմաբաններ Ի. Օրթայլու¹⁷ և Հ. Ինալըքի¹⁸ ուսումնասիրություններում, իսկ օսմանյան հարեմի պատմությունը

2017, 942 s., **Kinalzade Hasan Çelebi**, Tezkiretü'ş Şuarâ, cilt 1, Ankara, 1978, 660 s., **Reşat F.**, Tarih-i Edebiyat-ı Osmaniyye, v.1, hazırlayanlar: **Erbay E., Babür Y.**, İstanbul, 1961, 376 s., **Riyâzî Muhammed Efendi**, Riyâzü'ş-Şuara (Tezkiretü'ş-Şuara), hazırlayan: **Açıkgöz N.**, Ankara, 2012, 356 s., **Sehi Beg**, Heşt-Bihişt, hazırlayanlar: **İpekten H., Kut G., İsen M., Ayan H., Karabey T.**, Ankara, 2017, LXXVIII+189 s., **Sehi Bey**, Tezkire (Heşt Behişt), İstanbul, 1980, 259 s., **Şeref A.**, Fezleke-i Tarih-i Devlet-i Osmaniye, İstanbul, 1315 [1897], 224 s., **Tevfik M.**, Kâfile-i Şu'arâ, hazırlayanlar: **Oğuz F. S. K., Koncu H., Çakır M.**, Ankara, 2017, 333 s., Tezkire-i Lâtîfi, İstanbul, 1314 (1927), 339 s., Tezkire-i Mecâlis-i Şu'arâ-yı Rûm Garîbî Tezkiresi, hazırlayan: **Babacan İ.**, 1. Baskı, Ankara, 2010, VIII+104 s.

⁵ **Բայրուրյան Վ.**, Օսմանյան կայսրության պատմություն, Երևան, 2011 թ., 716 էջ:

⁶ **Петросян Ю.**, Османская империя: Могущество и гибель, Москва, 1990, 280 с.

⁷ **Şeref A.**, Fezleke-i Tarih-i Devlet-i Osmaniye, İstanbul, 1315 [1897], 224 s.,

⁸ **Cevad A.**, Mükemmel Osmanlı Tarihi, C. 1, İstanbul, 1913, 285 s.

⁹ **Uzunçarşılı İ.**, Osmanlı Tarihi, c. 2., İstanbulun Fethinden Kanuni Sultan Süleymanın Ölümüne Kadar, Ankara, 1988, 756+1 s.

¹⁰ **Inalcık H.**, The Ottoman Empire. The Classical Age (1300-1600), London, 1973, 258 p.

¹¹ **Рансимен С.** (Пер. с англ. Предисл. И. Е. Петросян и К. Н. Юзбашьяна. Примечания и дополнения Сосискина), Падение Константинополя в 1453 году. (The fall of Constantinople in 1453), Москва, 1983, 143 с.

¹² **Shaw S.**, History of the Ottoman Empire and Modern Turkey, vol. 1, Empire of the Gazis: The Rise and Decline of the Ottoman Empire (1280-1808), Cambridge, 1976, XVI+351 p.

¹³ **Imber C.**, The Ottoman Empire (1300-1650): The Structure of Power, London, 2004, 448 p.

¹⁴ **Lane-Poole S.**, Turkey, London, 1908, 374 p.

¹⁵ **Worringer R.**, A Short History of The Ottoman Empire, Toronto-Buffalo-London, 827 p.

¹⁶ **Navarian A.**, Les Sultans Poètes (1451-1808), Tome 5, Paris, 1936, 148 p.

¹⁷ **Ortaylı İ.**, Osmanlı sarayında hayat, İzmir, 2008, 216 s.

¹⁸ **Inalcık H.**, Şair ve Patron, 1. Basım, Ankara, 2003, 90 s.

համակողմանիորեն ներկայացված է Ու. Չաղաթայի¹⁹ և Ն. Սաքաօղլուի²⁰ մենագրություններում:

Արևելյան դասական գրականության մեջ վերածննդի՝ որպես փիլիսոփայական և պատմամշակութային երևույթի բնութագրման ու ժամանակային սահմանների հստակեցման, արաբապարսկական գրական մտքի ավանդույթները պատկերացնելու առումով օգտակար են եղել հայ իրանագետ-գրականագետ Ա. Կոզմոյանի աշխատությունները²¹, ինչպես նաև խորհրդային արևելագետներ Ե. Բերտելսի²², Ի. Բրագինսկու²³, Մ. Օսմանովի²⁴, Յա. Ռիպկայի²⁵ մենագրությունները, Ռ. Մոլլովի²⁶ հոդվածը: Սույն ուսումնասիրությունը կատարելիս գրականագիտական մեթոդների կիրառման գործում օգտակար է եղել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Սարինյանի համապատասխան հոդվածը²⁷:

Օսմանյան գրականության զարգացման թեմատիկ ուղղություններից սուֆիական միստիցիզմի գիտական մեկնաբանությունը լավագույնս ներկայացված է խորհրդային արևելագետ Ե. Բերտելսի²⁸, թուրք պատմաբան Մ. Իզի²⁹ համապատասխան աշխատություններում: Քրիստոնեական միստիցիզմի և իսլամական սուֆիզմի համեմատության գիտական լավագույն նմուշ է թուրքագետ

¹⁹ **Çağatay U.**, Padişahların Kadınları Ve Kızları, Ankara, 1992, 312 s.

²⁰ **Sakaoğlu N.**, Bu mülkün kadın sultanları, valide sultanlar, hatunlar, hasekiler, kadinefendiler, sultanevendiler, 1. Basım, İstanbul, 2011, 573 s.

²¹ **Կոզմոյան Ա., Մուրադյան Պ.**, Հայոց և պարսից միջնադարյան քնարերգության համեմատական պոետիկան (10-16-րդ դարեր), Երևան, «Գիտություն» հրատ., 1997 թ., 220 էջ, ինչպես նաև **Կապուտիկյան Ա., Կոզմոյան Ա.**, Պարսից պոեզիայի ընտրանի, Երևան, Մուղնի հրատ., 2004 թ., 128 էջ:

²² **Бертельс Е.**, Избранные труды. История литературы и культуры Ирана, Москва, 1988, 554 с.

²³ **Брагинский И., Комиссаров Д.**, Персидская литература, краткий очерк, Москва, Изд-во вост. лит., 1963, 214 с., так же **Брагинский И.**, Из истории таджикской и персидской литературы, Москва, Изд-во «Наука», 1972, 524 с.

²⁴ **Османов М.**, Стиль персидско-таджикской поэзии IX-X вв., Москва, Изд-во вост. лит., 1974, 558 с.

²⁵ **Рипка Я.**, История персидской и таджикской литературы, Москва, Изд-во «Прогресс», 1970, 440 с.

²⁶ **Моллов Р.**, О некоторых ренессансных тенденциях в турецкой литературе, Теоритические проблемы восточных литератур, Москва, Изд-во «Наука», 1969, стр. 100-107.

²⁷ **Սարինյան Ա.**, Գրականագիտական մեթոդներ, Վեմ համահայկական հանդես, Թ (ԺԵ) տարի, թիվ 1 (57), Երևան, հունվար-մարտ, 2017, էջ 9-27, <https://vemjournal.org/wp-content/uploads/2020/07/02-%D5%80%D5%A%D5%B4%D5%B6%D5%A1%D6%84%D5%A1%D6%80%D5%A5%D6%80-2017-1.pdf> (հասանելի է՝ 14.08.2023)

²⁸ **Бертельс Е.**, Избранные труды. Суфизм и суфийская литература, Том 3, Москва, 1965, 524 с.

²⁹ **İz M.**, Tasavvuf: Mâhiyeti, Büyükleri ve Tarikâtlar, İstanbul, 1997, 255 s.

Ալ. Սաֆարյանի՝ Գրիգոր Նարեկացու և սուֆի բանաստեղծների պոեզիայի քննությանը նվիրված հոդվածը³⁰:

Ատենախոսության հիմնական առանցքը ձևավորելու համար կարևոր են եղել այն աշխատություններն ու հոդվածները, որոնք նվիրված են օսմանյան գրականության պատմության տարբեր հիմնահարցերի քննությանը: Հարկ է փաստել, որ արևմտյան, թուրք և խորհրդային գրականագետների աշխատություններն այս առումով առանձնանում են մեթոդաբանական տարբերություններով, ինչը հնարավորություն է ընձեռել նյութի համակողմանի քննության համար: Օսմանյան գրականության լիակատար ուսումնասիրությանն են նվիրված անգլիացի արևելագետ Է. Ջ. Գիբբի³¹, Ջ. Ռեդհաուզի³², Թ. Հալմանի³³ աշխատությունները:

Թուրքական և օսմանյան գրականության պատմությանը խորը և համակողմանի անդրադարձ է կատարել ռուսաստանյան, ապա՝ խորհրդային արևելագիտությունը: Այս համատեքստում հարկ ենք համարում ընդգծել Վ. Սմիրնովի³⁴, Ա. Կրիմսկու³⁵, Ի. Բորովինայի³⁶, Վ. Գարբուզովայի³⁷, Ե. Մաշտակովայի³⁸ աշխատությունների կարևորությունը մեր ատենախոսության համար: Թուրք գրականության պատմության համալիր հետազոտություն է թուրք գրականագետ Ն. Ս. Բանարլի³⁹ աշխատությունը: Օսմանյան դիվանի պատմության առավել համակողմանի ուսումնասիրություններ են Մ. Ֆ.

³⁰ Սաֆարյան Ա., Գրիգոր Նարեկացու ու սուֆի բանաստեղծների ստեղծագործություններում ավանդական պատկերների «ադապտացման» մասին, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Երևան, ՀՀ ԳԱԱ, 1993, էջ 103-113:

³¹ Gibb E. J., A history of Ottoman poetry, v. 2, London, 1902, 405 p., **տոյսի՝** A history of Ottoman poetry, v. 3, London, 1904, 400 p., **տոյսի՝** The poets and poetry of Turkey, London, 1901, 378 p.

³² Redhouse J., On the History, System and Varieties of Turkish Poetry, London, 1879, 63 p.

³³ Halman T., A Millennium of Turkish Literature (A Concise History), Republic of Turkey, Ministry of culture and tourism publications, New York, 184 p.

³⁴ Смирнов В., Очеркъ Историі Турецкой Литературы, Санкт-Петербург, 1891, 130 с.

³⁵ Крымский А., История Турции и ее литературы, Коллекция Труды по востоковедению по востоковедению, издаваемые Лазаревским Институтом Восточных языков, выпуск 29, № 1-й, т. 2, Москва, 1910, 279 с.

³⁶ Боролина И., Литература востока в средние века, часть 2, Москва, 1970, 464 с.

³⁷ Гарбузова В., Поэты средневековой Турции, Ленинград, 1963, 201 с.

³⁸ Мангакова Е., Из истории сатиры и юмора в турецкой литературе, Москва, 1972, 280 с.

³⁹ Banarlı N., Resimli Türk Edebiyatı Tarihi, c.1, İstanbul, 2004, 664 s.

Քյոփրուլուի⁴⁰, Ս. Շահաբեդդինի⁴¹, Ա. Լեվենդի⁴², Օ. Քոլչաքի⁴³, Ի. Փալալի⁴⁴ մենագրությունները: Օսմանյան հեղինակների կյանքի և գործունեության ընդհանուր քննությանն է նվիրված Բուրսալը Թահիր Մեհմեթի⁴⁵ աշխատությունը:

Հայ, թուրք, խորհրդային արևմտյան գիտնականների մի շարք ուսումնասիրություններ նվիրված են Արևելքում և Օսմանյան կայսրությունում կնոջ կարգավիճակին, առանձին քննության են ենթարկվում կանանց մուտքը գրականության ասպարեզ և նրանց գործունեությունը: Այս առումով կցանկանանք առանձնացնել թյուրքագետ Ալ. Սաֆարյանի մենագրությունը⁴⁶, որտեղ առանձին գլխով հեղինակը մանրամասն քննում է թուրք կանանց հիմնախնդիրն ու անդրադարձ կատարում կին գրողներին: Թեմայի շրջանակներում ուշագրավ է Ալ. Սաֆարյանի հոդվածը նվիրված թուրքական ֆեմինիզմի պատմությանը⁴⁷: Իրանական գրականության օրինակով խնդրին անդրադարձել է նաև իրանագետ Լ. Սաֆրաստյանը⁴⁸: Թեմայի վրա լույս են սփռում խորհրդային արևելագետ Վ. Գորդլևսկու՝ կանանց խնդիրներին նվիրված հոդվածը⁴⁹, ուսումնասիրողներ Վ. Էնդրյուսի և Մ. Քալվաքլի համատեղ մենագրությունը⁵⁰, ինչպես նաև Մ. Էրլերի և Մ. Կովալևսկու համատեղ աշխատությունը⁵¹: Իսլամում կնոջ դերը հասկանալու և մեկնաբանելու համար օգտակար են եղել Յ. Հադադի և Յ. Էսպոզիտոյի⁵², Մ. Ջաֆրուլլա Խանի⁵³, Ա. Վադուդի⁵⁴ թեմատիկ աշխատությունները: Հարկ ենք

⁴⁰ **Koprülü M.**, Yeni Osmanlı tarih-i edebiyatı, İstanbul, 1332 (1913), 392 s., **տույնի՝** Edebiyat Araştırmaları, c. 2, 2. baskı, Ankara, 2004, 632 s.

⁴¹ **Şahabeddin S.**, Tarih-i Edebiyatı Osmaniyye, İstanbul, 1328 (1910), 334 s.

⁴² **Levend A.**, Divan Edebiyatı: Kelimeler ve Remizler, Mazmunlar ve Mefhumlar, 4. Basım, İstanbul, 1984, 662 s.

⁴³ **Kolçak O.**, Divan Edebiyatı Sırları, İstanbul, 2005, 464 s.

⁴⁴ **Pala İ.**, Ansiklopedik Divan Şiiri Sözlüğü, İstanbul, 2002, 637 s., **տույնի՝** Divan Edebiyatı, 19. Basım, İstanbul, 2017, XVII+162 s.

⁴⁵ **Bursalı Tahir M.**, Osmanlı Müellifleri, C. 2., Ankara, 2016, 448 s.

⁴⁶ **Սաֆարյան Ա.**, Չիյա Գյոքալիը և «Թյուրքականության հիմունքները», Երևան, 2012 թ., 300 էջ:

⁴⁷ **Safaryan A.**, On the History of Turkish Feminism, p. 141-151.

⁴⁸ **Սաֆրաստյան Լ.**, Կանանց հիմնախնդիրները ժամանակակից իրանական գրականության մեջ, Երևան, 2010, 170 էջ:

⁴⁹ **Гордлевский В.**, Избранные сочинения, т. 3, «Женская доля», Москва, 1962, 591 с.

⁵⁰ **Andrews W., Kalpaklı M.**, The Age of Beloveds. Love And the Beloved in Early-Modern Ottoman and European Culture and Society, Durham and London, 2005, 440 p.

⁵¹ **Erler M., Kowaleski M.**, Women and Power in the Middle Ages, Athens, 1988, 273 p.

⁵² **Haddad Y., Esposito J.**, Daughters of Abraham: Feminist Thought in Judaism, Christianity and Islam, Gainesville, 2000, 180 p., **տույնի՝** Islam, Gender and Social Change, New York, 1997, 288 p.

⁵³ **Zafulla Khan M.**, Women in Islam, Islamabad, 2021, 40 p.

⁵⁴ **Wadud A.**, Qur'an and Woman, New York, Oxford, 1999, XXVI+118 p.

համարում առանձնացնել Դ. Հավլիողլուի⁵⁵, Ու Չեթինքայաի⁵⁶, Գ. Ումայի⁵⁷ հոդվածները՝ որպես օսմանյան հասարակության մեջ կանանց կարգավիճակի վերլուծությանը նվիրված արժեքավոր նյութեր:

Օսմանյան կին գրողների կյանքի և ստեղծագործությունների խորքային ուսումնասիրությամբ է զբաղվել թուրք գրականագետ Ս. Իսփիրլին⁵⁸, ում մենագրությունը կարևոր դիդակտիկ նյութ է նեղ և ոլորտային ուսումնասիրություն իրականացնելու համար: Օսմանյան բանաստեղծուհիների կյանքի և գործունեության ուսումնասիրությանը նվիրված աշխատություններից պետք է առանձնացնել Մ. Զիհնու⁵⁹, Մ. Ուրագի⁶⁰, Թ. Այի⁶¹ աշխատությունները, ռուսաստանյան արևելագետ-գրականագետներ Մ. Բեպենկովայի⁶² և Ա. Նիգմատովիչայի⁶³, թուրք գրականագետ Յ. Մորքոչի⁶⁴, Բ. Սըլայի⁶⁵ հոդվածները:

Մեր ատենախոսության համար հիմք են հանդիսացել Միհրի Հաթունի պոեզիայի ուսումնասիրությանը նվիրված տարբեր գրականագիտական

⁵⁵ **Havlioğlu D.**, Valideler, Hemşireler, Kerimeler: Osmanlı Şiirinde Kadınlararasılık, Journal of Turkish Studies 34/II, Ankara, 2010, s. 105-113, https://www.academia.edu/1839843/Valideler_Hem%C5%9Fireler_Kerimeler_Osmanl%C4%B1_%C5%9Eiirinde_Kad%C4%B1nlararas%C4%B1%C4%B1k (հասանելի է՝ 18.05.2020)

⁵⁶ **Çetinkaya Ü.**, Divan edebiyatında kadına genel bakış, Turkish Studies International Periodical for the Languages, Literature and History of Turkish or Turkic Volume 3/4, Ankara, Summer 2008, s. 279-334. http://turkoloji.cu.edu.tr/ESK1%20TURK%20%20EDEBIYATI/ulku_cetinkaya_divan_edebiyatinda_kadina_genel_bakis.pdf (հասանելի է՝ 28.02.2020)

⁵⁷ **Umay G.**, “İslâmi Dönemde Türk Toplumunda Kadının Yeri ve Önemi”, Millî Folklor, Yıl: 12 (Yaz 2000), Sayı: 46, s. 4-9, http://www.millifolklor.com/PdfViewer.aspx?Sayi=46&Sayfa=2&fbclid=IwAR34AqzNHQu5GYhQI3k8AqF8c_H351XOJEdSuAm6cDDX4zH9gkTLmbGqQy (հասանելի է՝ 29.02.2020)

⁵⁸ **İspirli S.**, Kadın divan şairleri ve geleneğin uzantısı, I.Basım, Ankara, 2007, 245 s.

⁵⁹ **Zihni M.**, Meşâhirü'n-Nisâ, İstanbul, 1294 [1878], 371 s.

⁶⁰ **Uraz M.**, Resimli Türk Kadın Şair ve Muharrirlerimiz, İstanbul, 1941, s. 554+4.

⁶¹ **Ay T.**, Türk Kadın Şairleri, İstanbul, 1934, 83 s.

⁶² **Репенькова М.**, Женщины Турции в литературе и обществе, Вестник Московского Университета, сер. 13, Востоковедение, № 2, Москва, 2008, с. 69-84.

⁶³ **Нигматуллина А.**, Женская тема в творчестве тюркских поэтесс Михри Хатун (XV век), Газизы Самитовой (XX век), Ежеквартальный международный журнал общественных наук Karadeniz, № 5, Black Sea – Черное море, 2010, с. 27-32, <https://dergipark.org.tr/tr/download/article-file/155430> (հասանելի է 11.09.2023).

⁶⁴ **Morkoç Y.**, Klasik Türk edebiyatında kadın şairlere bir bakış, Sosyal Bilimler Dergisi, Cilt: 9, Sayı: 2, Ekim, Manisa, 2011, s. 223-235. <http://www.arastirmax.com/system/files/dergiler/123831/makaleler/9/2/arastirmax-klasik-turk-edebiyatinda-kadin-sairlere-bir-bakis.pdf> (հասանելի է՝ 07.08.2020), **տոյնի՝** Osmanlı kadın şairlerinin Divan edebiyatı geleneğinden ayrılan sesi ve farklı ifade biçimleri, International Journal of Human Sciences, Volume 14, Issue 4, Sakarya, Sakarya Üniversitesi, 2017, s. 3456-3471.

⁶⁵ **Sılay K.**, “Singing his words: Ottoman women poets and the power of patriarchy,” in Zilfi, Madeline (ed.), Women in the Ottoman Empire, Leiden: Brill, 1997, p. 197–213.

աշխատանքները, ինչպես նաև թուրք, ռուս և աղբբեջանցի գրականագետների կողմից Միհրիի հրատարակված ստեղծագործությունների ժողովածուները:

Միհրի Հաթունի Դիվանի ամբողջական տեքստն առաջին անգամ համապատասխան նախաբանով և ծանոթագրություններով հրատարակել է խորհրդային թուրքագետ-գրականագետ Ե. Մաշտոկովան⁶⁶: Թուրքական գրականագիտության մեջ ուշագրավ են Մ. Արսլանի⁶⁷ և Մ. Հաքվերդիօղլուի⁶⁸ հրատարակություններն ու մեկնաբանությունները, Միհրիի Դիվանի տեքստն աղբբեջաներեն թարգմանել և ծանոթագրել է աղբբեջանցի գրականագետ Ռ. Աքսարը⁶⁹:

Միհրի Հաթունի կյանքին, գրական գործունեությանը, գրողի կերպարին, ստեղծագործությունների վերլուծությանը նվիրված աշխատություններից հատկապես կարևոր են Ս. Սեգերի⁷⁰, Մ. Հաքվերդիօղլուի⁷¹, Դ. Հավլիօղլուի⁷² ուսումնասիրությունները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացությունից, օգտագործված աղբբյուրների և գրականության ցանկից: Ատենախոսության ամբողջ ծավալը 158 համակարգչային էջ է:

Ներածության մեջ հիմնավորվում է թեմայի արդիականությունը, գիտական նորոյթը, ներկայացվում են ատենախոսության նպատակը և խնդիրները, տեսամեթոդական հիմքը, ինչպես նաև քննվում են օգտագործված աղբբյուրները, գրականությունը և տրվում է հարցի ուսումնասիրվածության ընդհանուր պատկերը:

Առաջին գլուխը՝ «ՕՍՄԱՆՅԱՆ ԴԻՎԱՆԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՁԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (15-16-ՐԴ ԴԱՐԵՐ)», բաղկացած է երեք ենթագլխից: **«Օսմանյան պալատական (դիվանի) գրականության ձևավորման միջավայրն ու նախադրյալները»**

⁶⁶ Михри-Хатун. Диван, Критический текст и вступительная статья **Е. Мантраковоџ**, Москва, 1967, 104+306 с.

⁶⁷ Mihri Hatun Divanı, hazırlayan: **Arslan M.**, Amasya, 2007, 400 s.

⁶⁸ **Hakverdioğlu M.**, 15. yüzyılda bir kadın hakları savunucusu: Mihri Hâtun: hayatı, şahsiyeti ve divanı, Amasya, 2007, 447 s.

⁶⁹ **Öskor R.**, Mehri Hatun. Divan. Bakı, 2011, 368 s.

⁷⁰ **Sezer S.**, Türk Safosu Mihri Hatun, İstanbul, 1997, 254 s.

⁷¹ **Hakverdioğlu M.**, Mihri Hatunu anlamak, Amasya, 2016, 321 s.

⁷² **Havlioğlu D.**, Mihri Hatun. Performance, Gender-Bending, and Subversion in Ottoman Intellectual History, New York, 2017, 256 p.

վերնագրով առաջին ենթագլխում ներկայացված են օսմանյան պալատական միջավայրում՝ սուլթանի ու պալատական վերնախավի հովանավորության ու վերահսկողության ներքո, գրականության ձևավորման պատմությունը և զարգացման պայմանները: Առաջին գլխի երկրորդ ենթագլխում, որը կոչվում է **«15-16-րդ դարերի օսմանյան պոեզիայի գաղափարական և թեմատիկ առանձնահատկությունները»**, ուսումնասիրվել են Մերձավոր Արևելքում և հատկապես՝ Օսմանյան կայսրությունում տիրապետող իսլամական փիլիսոփայական-գաղափարական ուղղությունների հիմքով առաջ եկած արևելյան գրական ավանդույթները, արևելյան վերածննդի միտումներն ու այս ամենի հիման վրա ձևավորված օսմանյան գրականության թեմատիկ հիմնական առանձնահատկությունները: Այս գլխի երրորդ ենթագլուխը, որը վերնագրված է **«15-16-րդ դարերի օսմանյան պոեզիայի հիմնական ժանրերը. ընդհանուր ակնարկ»**, նվիրված է օսմանյան գրականության մեջ տեղ գտած արևելյան պոեզիայի հիմնական ժանրերի քննությանը:

«ԿԻՆ ԳՐՈՂՆԵՐԻ ԴԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ (15-16-ՐԴ ԴԱՐԵՐ)» վերնագրով **երկրորդ գլուխը** նույնպես բաղկացած է երեք ենթագլխից: **«Կանանց կարգավիճակն իսլամական Արևելքում և Օսմանյան կայսրությունում. ընդհանուր պատկերի ուրվագծերը»** վերտառությամբ առաջին ենթագլխում քննության են առնվել օսմանյան իսլամական հասարակության մեջ կանանց դերն ու կարգավիճակը, դրանից բխող սոցիալիզացիայի հիմնական դրսևորումները: Երկրորդ ենթագլխում, որը կոչվում է **«Կինը՝ որպես օսմանյան պոեզիայի կարևոր կերպար»**, ուսումնասիրվող ժամանակահատվածի պոեզիայի տարբեր նմուշների օգնությամբ ներկայացվել են գրականության մեջ կնոջ կերպարային առանձնահատկությունները, ըստ այդմ՝ եզրահանգումներ են արվել օսմանյան միջավայրում կնոջը վերաբերող ընկալումների վերաբերյալ: **«15-16-րդ դարերի օսմանյան կին գրողների կյանքն ու ստեղծագործությունների ընդհանուր բնութագիրը»** կոչվող երրորդ ենթագլխում մանրամասն քննվել և ներկայացվել են 15-16-րդ դարերում օսմանյան պալատում ստեղծագործած կին գրողների կյանքն ու գործունեությունը, տրվել նրանց ստեղծագործությունների բովանդակային և թեմատիկ նկարագիրը:

Երրորդ գլուխը վերնագրված է **«ՄԻՆԻ ՀԱԹՈՒՆԻ ԴԻՎԱՆԻ ԹԵՄԱՏԻԿ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»** և բաղկացած է չորս ենթագլխից: Այդ գլխի՝ **«Սուֆիական պատկերների արտացոլումը Միհրի Հաթունի դիվանում»** վերնագրով առաջին ենթագլխում ուսումնասիրվել են օսմանյան պոեզիայի

առանցքային թեմատիկ ուղղություններից սուֆիզմի և վերջինիս խորհրդապաշտությունների դրսևորումները Միհրի Հաթունի ստեղծագործություններում, կատարվել է համեմատական բնութագիր մյուս կին գրողների սուֆիական բնույթի ստեղծագործությունների հետ: Այս ենթագլխում փորձ ենք արել վեր հանել և մեկնաբանել սուֆիական քողի ներքո ներկայացող գրողի հիմնական ասելիքը: Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է **«Սիրային թեմատիկայի առանձնահատկությունները Միհրի Հաթունի պոեզիայում»**, ուսումնասիրել ենք Միհրի Հաթունի սիրային բնույթի ստեղծագործությունների առանձնահատկություններն ու նրբերանգները: **«Կրոնական և սոցիալական թեմատիկայի արտացոլումը Միհրի Հաթունի ստեղծագործություններում»** կոչվող երրորդ ենթագլխում խոսվում է Միհրի Հաթունի պոեզիայում կրոնական թեմատիկայի դրսևորումների մասին, առանձին ներկայացված են բանաստեղծուհու՝ կրոնական բնույթի գազելներում և քասիդներում բարձրաձայնվող սոցիալական անհավասարության մասին ժամանակի տիրապետող մտահոգություններն ու քննադատական մտքերը: Երրորդ գլխի չորրորդ ենթագլուխը վերնագրված է **«Գենդերային պայքարի դրսևորումները Միհրի Հաթունի դիվանում»**, որտեղ ներկայացրել ենք բանաստեղծուհու գրական բանավեճերը ժամանակի հայտնի գրողներից մեկի՝ Նեջաթիի հետ: Վերլուծել ենք այդ ստեղծագործություններում բանաստեղծուհու բարձրաձայնած մտքերը գենդերային անհավասարության, կանացի խելքի և տաղանդի գովաբանության մասին:

Եզրակացություններ: Ուսումնասիրելով 15-16-րդ դարերում օսմանյան գրականության մեջ կին գրողների ստեղծագործությունների թեմատիկ և ժանրային առանձնահատկությունները, առանձնացնելով այդ գրողներից առավել հայտնին համարվող Միհրի Հաթունի Դիվանում տեղ գտած ստեղծագործությունները՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Օսմանյան դասական գրականությունը ձևավորվել է միայն պալատական միջավայրում՝ գտնվելով ամբողջապես վերնախավի և անձամբ սուլթանների հովանավորության ու վերահսկողության տակ՝ դուրս չգալով «բարձր արվեստի» շրջանակներից և չհամադրվելով հասարակության խնդիրներն ու հոգսերն արտահայտող ժողովրդական-աշուղական պոեզիայի հետ: 15-16-րդ դարերում Օսմանյան կայսրության գրական կյանքում ընդունելություն գտնելու, ստեղծագործելու հնարավորություն ունեին միայն այն բանաստեղծները, որոնք

վայելում էին վերնախավի հովանավորչությունը կամ անձամբ այդ էլիտայի ներկայացուցիչներ էին:

2. Օսմանյան դիվանի գրականությունը ձևավորվեց ու զարգացավ՝ փորձելով յուրացնել միաժամանակ և՛ բյուզանդական, ըստ այդմ անտիկ ու հելլենական, և՛ արաբապարսկական, մասնավորապես իսլամական շրջանի փիլիսոփայական միտքն ու գրական-գեղարվեստական արժեքները: Արևելքի և Արևմուտքի ոչ համարժեք ու ոչ միասեռ ավանդույթների միախառնման փորձերը տեսականորեն համատեղելի չէին, ինչն էլ արդեն 15-16-րդ դարերում հանգեցրել էր, այսպես կոչված «տեխնիկական պոեզիայի»՝ իմաստազուրկ չափածո գործերի ստեղծմանը՝ թեմատիկաների և ուղղությունների մատուցման գործում առաջ բերելով ճգնաժամային երևույթներ:

3. Արևելաիսլամական քաղաքակրթական համակարգի մաս կազմող օսմանյան իրականության մեջ կանայք որոշակիորեն մեկուսացված էին սոցիալական, մշակութային, կրոնական կյանքից: Մի կողմից հասարակական կարծրատիպերը, մյուս կողմից իսլամական օրենքների գործնական կիրառումը հանգեցրել էին կանանց մարգինալացմանը՝ հիմնականում գրելով նրանց հասարակական տարբեր ոլորտներում, այդ թվում գրականության մեջ ինքնարտահայտման հնարավորություններից:

4. Հիմնականում իսլամական միջավայրում գրի առնված տարբեր աղբյուրներ ավանդաբար լուրմ կամ սակավ տեղեկություններ են հաղորդում թուրք կնոջ կարգավիճակի, ընտանիքում և հասարակության մեջ նրա ունեցած դերի, արժեքի մասին, մինչդեռ դիվանի գրականության բանաստեղծների ստեղծագործություններից տարբեր մեջբերումներն օսմանյան կնոջ նկատմամբ ցուցաբերված հասարակական ընկալումների, դրանով պայմանավորված հաճախ բացասական վերաբերմունքի գեղարվեստական խտացումն են:

5. 15-16-րդ դարերի օսմանյան կին գրողները թեև հիմնականում հետևել են դիվանի գրականության այն բոլոր ավանդույթներին և կաղապարներին, որոնք ստեղծվել են տղամարդ պոետների կողմից, սակայն բանաստեղծուհիներից Միհրի Հաթունի ստեղծագործություններն առանձնանում են նաև ընկալումների որոշակի տարբերությամբ: Վերջինս որպես կին գրող կարողացել է գեղարվեստորեն և առավել զգացմունքային շեշտադրումներով բարձրաձայնել տղամարդկանց համեմատ կանանց անհավասար և ստորադաս կարգավիճակը, միաժամանակ գովերգել կանացի խելքն ու արժանիքները:

6. 15-16-րդ դարերում օսմանյան գրականության մեջ լայն տարածում ունեցող իսլամական միստիցիզմը՝ սուֆիզմը, իր յուրահատուկ դրսևորումն է ստացել կին գրողների պոեզիայում: Հարկ է նշել, որ Միհրի Հաթունի համար սուֆիական այլաբանությունը հիմնականում ծառայել է որպես միջոց գաղափարական անազատության պայմաններում կրոնական քողի ներքո սեփական ասելիքը ներկայացնելու համար: Սուֆիական մոտիվներով գրված ստեղծագործությունները երևան են հանում Միհրիի վարպետությունը, որով նա կառուցում էր հանգավորում, բառախաղեր, կերտում սիմվոլների ներդաշնակություն՝ հավատարիմ մնալով տվյալ ստեղծագործության ժանրաոճական առանձնահատկություններին և արևելյան տաղաչափության կանոններին: Կնոջ սոցիալիզացիայի համար բարդ և անբարենպաստ պայմաններում իր տաղանդի շնորհիվ սուլթանական հարեմում ստեղծագործող բանաստեղծուհին ընդունվել է պալատական վերնախավի կողմից և իր տեղն է զբաղեցրել պալատական գրականության մեջ:

7. Միհրիի սիրային քնարերգությունն արտահայտում է և՛ երկնային (պլատոնական), և՛ երկրային սերը: Այս ստեղծագործություններին բնորոշ է սուֆիական սիմվոլիկան, որի միջոցով նա արտահայտում է իր անմնացորդ սերն Աստծո հանդեպ՝ որպես «կատարյալ ճշմարտությանը» հասնելու միակ ճանապարհ: Մյուս կողմից Միհրին խոսում է երկրային սիրո և աշխարհիկ վայելքների մասին: Ի տարբերություն ժամանակի մյուս գրողների, նա չի սահմանափակվում միայն սիրեցյալի արժանիքների գովաբանությամբ, այլև ավելի կենդանի շփման մեջ է մտնում այս կերպարի հետ, խորհուրդներ է տալիս վերջինիս, նաև արտահայտում է իր բողոքն ու հիասթափությունը:

8. Միհրի Հաթունն օսմանյան պոեզիայում այն եզակիներից է, ում հաջողվել է որոշ չափով կոտրել ընդունված կարծրատիպերը՝ սիրային քնարերգության շրջանակներում կնոջ երազանքներն ու դժգոհություններն արտահայտելու և վերջինիս սիրելու իրավունքը պաշտպանելու համար: Այս առումով Միհրի Հաթունի ավանդն օսմանյան դիվանի գրականության մեջ ինչ-որ առումով կարելի է բացառիկ համարել:

9. Ժամանակի գրական միտումներին հավատարիմ մնալով հանդերձ՝ Միհրի Հաթունը կրոնական թեմատիկայի միջոցով կարողացել է անդրադառնալ հասարակությանը հուզող սոցիալական խնդիրներին ևս: Թեև Միհրիի ստեղծագործություններում սոցիալական խնդիրների մասին խոսվում է շատ քիչ, անուղղակիորեն և կրոնական քողի ներքո, այնուհանդերձ այս մոտիվները

փաստում են այն մասին, որ բանաստեղծուհին ամբողջապես հեռացած չէր աշխարհիկ պոեզիայից և լինելով պալատական գրող՝ բարձրաձայնում է նաև սոցիալական անհավասարության հարցեր:

10. Միհրի Հաթունի «Աղբրսագիր» մեսնկին օսմանյան գրականության մեջ առաջին անգամ կնոջ կողմից բարձրացնում է տղամարդ-կին անհավասարության, իսլամական հասարակության մեջ կնոջ իրավագուրկ վիճակի և նրա իրավունքների պաշտպանության խնդիրները, ինչը պատմաքաղաքական տեսանկյունից ևս խորթ է քննվող ժամանակաշրջանին: 15-16-րդ դարերի բանաստեղծուհիները, որպես կանոն, տուրք են տվել քարացած ձևերին՝ առանց արտահայտելու իրենց սեռի տարբերությունը, սակայն Միհրի Հաթունի ստեղծագործություններում հանդիպում են որոշ անկեղծ ձևակերպումներ, որոնք ի ցույց են դնում կանացի զգացմունքայնություն: Նման թեմայի անգամ անուղղակի և հպանցիկ ներմուծումը գրական դաշտ հիշյալ ժամանակաշրջանի գրողից ոչ միայն քաջություն և համարձակություն, այլև մեծ վարպետություն էր պահանջում:

ԱՏԵՆԱՆՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԻՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՇԵՂԻՆԱԿԻ ՇԵՏԿՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ

1. Մելքոնյան Մ., Կին գրողները օսմանյան գրականության մեջ (XV-XVI դարեր), Արևելագիտության հարցեր, հ. 8, Երևան, ԵՊՀ հրատ., 2014, էջ 174-181:

2. Մելքոնյան Մ., Սիրային թեմատիկայի առանձնահատկությունները Միհրի Հաթունի պոեզիայում, Արևելագիտության հարցեր, հ. 11, Երևան, ԵՊՀ հրատ., 2016, էջ 135-153:

3. Մելքոնյան Մ., 15-16-րդ դարերի օսմանյան պոեզիայի թեմատիկ և ժանրային առանձնահատկությունների շուրջ, Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, XI-XII հատոր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 262-274:

4. Մելքոնյան Մ., Կնոջ կարգավիճակի արտահայտումը Միհրի Հաթունի «Hâteme-i Risâle» ստեղծագործության մեջ (15-16-րդ դարեր), Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ, XI-XII հատոր, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, էջ 275-280:

5. Մելքոնյան Մ., 15-16-րդ դարերի օսմանյան կին գրողների պոեզիայում առկա սուֆիական պատկերների շուրջ, Արևելագիտության հարցեր, հ. 13, Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 348-361:

6. Մելքոնյան Մ., Կրոնական թեմատիկայի արտացոլումը Միհրի Հաթունի ստեղծագործություններում, Կանթեղ: Գիտական հոդվածներ, թիվ 3 (76), Երևան, «Ասողիկ» հրատ., 2018, էջ 17-24:

7. Մելքոնյան Մ., Կնոջ էմանսիպացիայի խնդիրը Միհրի Հաթունի «Աղերսագրում», Արևելագիտության հարցեր, հ. 14, Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 279-288:

8. Մելքոնյան Մ., 15-16-րդ դարերի օսմանյան գրականության որոշ առանձնահատկությունների շուրջ, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու, թիվ 1.3 (26), Երևան, ԵՊՀ հրատ., 2018, էջ 33-41:

9. Մելքոնյան Մ., Բանաստեղծ-մեկենաս հարաբերությունների արտացոլումն օսմանյան դիվանի գրականության մեջ (15-16-րդ դարերի կին գրողների գրական գործունեության օրինակով), Մելս Սանթոյան 80. միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Միսմա» հրատ. 2018, էջ 291-304:

10. Մելքոնյան Մ., Գենդերային հակասությունների արտացոլումը Դիվանի գրականության մեջ. Նեջաթի և Միհրի Հաթուն, Արևելագիտության հարցեր, հ. 16, Երևան, ԵՊՀ հրատ., 2019, էջ 88-96:

11. Մելքոնյան Մ., Կանանց կարգավիճակը Օսմանյան կայսրությունում կին գրողների կյանքի և գործունեության օրինակով (XV-XVI դարեր), Կինը Արևելքում, ՀՀ ԳԱԱ Երևան, 2021, էջ 74-88:

Мелконян Мариам Овиковна
ТЕМАТИЧЕСКИЕ И ЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ ТВОРЧЕСТВА
ОСМАНСКИХ ЖЕНЩИН-ПИСАТЕЛЬНИЦ (XV-XVI ВВ.)

Защита диссертации на соискание ученой степени кандидата филологических наук состоится 21-го ноября 2024 года в 14:30 на заседании специализированного совета 066 КВОН (Зарубежная литература), действующего по адресу: г. Ереван, ул. Алек Манукян, 1, корпус факультета европейских языков и коммуникаций ЕГУ, аудитория 422.

Резюме

Настоящая диссертация посвящена изучению творчества османских женщин-писательниц XV-XVI веков. Исследуемый период считается важным этапом в османской литературе, который, помимо идейных и художественных нововведений, примечателен появлением первых женщин-авторов. Среда получения образования и творчества женщин в османском консервативном обществе, а также представленные произведения позволяют с новой точки зрения раскрыть особенности культурной жизни османской империи.

Диссертация состоит из введения, трёх глав с соответствующими подразделами, заключения и списка использованной литературы. Общий объём диссертации составляет 158 страниц.

Во введении изложены основные положения диссертации, актуальность выбранной темы, её теоретическое и прикладное значение, сформулированы цель и задачи исследования, научная новизна, методологическая основа, предыстория изученности темы, краткий обзор литературы.

Первая глава – «Формирование и основные направления развития османской диванной литературы (XV-XVI вв.)» – состоит из трёх подразделов. Здесь рассматриваются условия развития османской литературы в исследуемый период, предпосылки, а также тематические и жанровые направления.

Вторая глава – «Роль женщин-писательниц в османской литературе (XV-XVI вв.)» – также состоит из трёх подразделов. Она посвящена исследованию статуса женщин в Османской империи, являющейся моделью исламского общества. В этом контексте рассматриваются границы вовлеченности женщин в различные сферы общественной жизни, особенно возможности заниматься литературной деятельностью. Также изучаются биографии и деятельность поэтесс XV-XVI веков, даётся общая характеристика их произведений.

Третья глава – «Тематические особенности дивана Михри Хатун» – состоит из четырёх подразделов. В ней подробно рассматриваются тематические особенности творчества одной из наиболее выдающихся представительниц женщин-писательниц данного периода – Михри Хатун. На основе текстов её произведений и исследований по этой теме выделяются и анализируются такие темы, как суфизм, любовь, религиозность, социальные вопросы и гендерная конкуренция.

В заключении подведены итоги исследования и изложены основные выводы, сделанные в рамках настоящей диссертации.

Mariam Melkonyan

**THEMATIC AND GENRE PECULIARITIES OF THE WORKS OF OTTOMAN
WOMEN WRITERS (15th-16th CENTURIES)**

The defense of the dissertation for the degree of Candidate of Philological Sciences will take place on November 21st, 2024, at 14:30 at the meeting of the Specialized Council 066 of the HESC (Foreign Literature) at the address: Yerevan, Alek Manukyan 1, Faculty of European Languages and Communication of Yerevan State University, Room 422.

Summary

This dissertation is dedicated to the study of the works of Ottoman women writers of the 15th-16th centuries. The period under examination is considered a significant stage in Ottoman literature, notable not only for ideological and artistic innovations but also for the emergence of the first women authors. The educational and creative environment for women in Ottoman conservative society, along with the works presented, allow us to explore the peculiarities of Ottoman cultural life from a new perspective.

The dissertation consists of an introduction, three chapters with corresponding subsections, a conclusion, and a list of references. The total length of the dissertation is 158 pages.

The introduction outlines the main points of the dissertation, the relevance of the chosen topic, its theoretical and applied significance, the objectives and tasks of the research, its scientific novelty, the methodological foundation, the prehistory of the study of the topic, and a brief review of the literature.

The first chapter, “The Formation and Main Directions of the Development of Ottoman Divan Literature (15th-16th Centuries),” consists of three subsections. It examines the conditions of Ottoman literary development during the period under examination, its prerequisites, as well as thematic and genre directions.

The second chapter, “The Role of Women Writers in Ottoman Literature (15th-16th Centuries),” also consists of three subsections. It is dedicated to the study of the status of women in the Ottoman Empire, as a model of an Islamic society. In this context, the chapter examines the extent of women’s involvement in various spheres of public life, particularly their opportunities to engage in literary activity. The biographies and work of women poets of the 15th-16th centuries are also analyzed, providing an overview of their literary contributions.

The third chapter, “Thematic Features of Mihri Hatun’s Divan,” consists of four subsections. It provides a detailed analysis of the thematic features of one of the most prominent women writers of this period, Mihri Hatun. Based on the textual analysis of her works and studies on the subject, the chapter highlights and examines themes such as Sufism, love, religiosity, social issues, and gender competition.

The conclusion summarizes the research and presents the key findings drawn from the dissertation.

